

ՀՆԱԽՈՍԱԿՈՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ Ի Ն Հ Ա Յ Ո Յ Ք Ո Վ

Կերկայ յօդուածն հանուած է պատմականօրէն յոյժ կարեւոր և մանրամասն աշխատութենէ մը՝ տոյն վերնա-գրով, որ կը գտնուի մեր ապարանին մէջ ընդ մամուլով. և ուսկից ինչ ինչ հատուածներ պիտի տանք Հանդիսա ընթերցողաց, Քաթնուած է երկու մասանց, Առաջինոյն մէջ կը խօսի՝ զանազան զուգործութիւններով՝ մանկանց սննդեան, և կրօնական ու մտաւոր կրթութեան վրայ, Եւ երկրոր-դին մէջ՝ մարմնական կրթութեան, և քաղաքացիական գրաս-կան ու ֆարգական խաղերու մասին: Միով բանիւ, զորժ մը՝ վերին աստիճանի օգտակար թէ՛ աստիճանի քաղա-քակրթական պատմութեան, և թէ ներկայ հայ սերնդին համար, Որով կը յանձնարարենք զայն ամենուն:

ԽՄԲ.

Ս Ն Ո Ւ Ն Պ

Մանուկն իւր կենաց առաջին շրջանին, որ է մինչև յորտփակ<sup>1</sup> և ի յափ հասանել<sup>2</sup> կամ յարբունս հասանել<sup>3</sup> կը կարուէր առանձին դարմանի մը ծնողաց կողմանէ, որ կը կոչուէր սնունդ<sup>4</sup> և սնուցանել<sup>5</sup>:

1. — Նորածին մանկան առաջին պա-հանջը դիեցուցն էր բնականապէս: Մինչ հայ ռամկուհին անձամբ կը կատարէր այդ մայրենի պարտականութիւնը, իւր լանջաց վրայ պահելով միշտ մանուկը, բարձր դասակարգին մէջ տարբեր սովորութիւն մը կը տրեր. այն է՝ մանկանց դիեցուցն օտար կոյնածնել, ինչպէս կ'ընէին յոյն և հռովմայեցի ազնուուհիք ալ՝: Ենոնց պէս մեր «սիկնայք փափկասունք»<sup>6</sup> իրենց այդ հրաժարման նպատակ ունէին խուսափել դիեցման յարակից նեղութիւններէն, որոնք չէին հաշտուեր իրենց հեշտակեաց կեն-ցազավարութեան հետ. և ոմանք ալ գուցէ

պարզապէս յարգելու համար ազնուակա-նութեան աւանդական կարգերը:

Բայց կար նաև պարսկային սովորոյթը՝ արքայորդաց սնուցուցն յանձնելու իշ-խանաց, և կատարուելու անոնց տանց մէջ. որ սկսած էր Պարսից արքունիքէն և տա-րածուեր Հայոց ու Վրաց արքունեաց մէջ<sup>7</sup>: Եւ կը կազմէր տեսակ մը ներքին և ազ-գականութեան նմանող կապ երկու տնե-րու միջև: Արևապաշտ Սասանեանք, քր- ըիստոնեայ Հայոց անգամ չէին խորշեր յանձնել իրենց պայազատները, և ոչ ալ Հայք՝ ընդունել ու սնուցանել զանոնք: Մնացելը, այլ թէ կին, դայակ կը կո-չուէր, և յանձնատութիւնը՝ դայակ մը-տանել<sup>8</sup>. իսկ սնուցեալը՝ սակ կ'ըսուէր:

Եղիշէ պատմելով Յագկերտի անագո-րոյն վարմունքը մեր ազատաց հետ, կ'ըսէ՝ թէ ոչ միոյն երախտիքը չէր յիշեր. «և որ մեծն քան զամենայն է ըստ մարմնա-ւոր կարգի», կային ոմանք հայ նախա-բարներէն, որ անոր եղբայրները սնուցե-ր էին «մայրենի կաթամբ իւրեանց». այս ինքն իրենց մայրերն իսկ ստնտոս մտեալ<sup>9</sup> էին անոնք, և նա զանոնք աւելի ևս կը նեղէր<sup>10</sup>: Այնքան մեծ էր դիեցման գօղը, որ անոր անտեսման վրայ Պարսից ար-քային կողմանէ՝ կը զարմանայ մեր պատ-միչը:

Նոյն սովորութեան զոյգութեանը հայ արքունեաց մէջ ևս՝ կը վկայէ Խորենա-ցին, զրեմի՝ թէ Տրդատ իրեն դայակ ունեցեր էր մանկուհունի իշխան մը<sup>11</sup>. Եւ ըստ ուրիշի մը, անոր հօր սպանութեան և Հայաստանի վրդովման առթիւ «տեսալ դայկիսցն» զտղայն՝ ի Յունաստան փա-խուցեր էին<sup>12</sup>: Փաւստոս կը պատմէ Ար-տաւազդ ու Վասակ մամիկոնեանց համար՝ թէ «սնուցանէին նոքա զորդին զարքային (Տիրանայ) զԱրշակ<sup>13</sup>»: Նոյն ինքն կը կըրկ-նէ յիշեալ Վասակայ և անոր եղբոր վար-

1. Փաւ. 122. — 2. Աղբ. 84. Թ. 21. — 3. Խոր. Բ. 4. — 4. Բ ՄԿ. 9, 23. Պատ. Ար. 15. Խոր. Բ. 4. — 5. Փաւ. 122. Խոր. Բ. 4. — 6. Dar.

Nutria, — 7. Եղբ. 156. — 8. Փորթ. 213-4. — 9. Եղբ. 64. — 10. Խոր. Բ. 4. — 11. Եղբ. 18. — 12. Խոր. Բ. 4. — 13. Աթթ. 42. — 14. Փաւ. 47.

դանայ մասին՝ թէ «դայեակը և սնուցիչը էին թագաւորին Արշակայ՝»։ Մեծորը եւրէց նկատելով Մամիկոնեանց ստէպ յիշատակութիւնն իբր դայեակ թագաւորին, կարծեց՝ թէ ժառանգարար նոյն տոհմին վիճակուած էր սնուցանել արքայորդիքը։ Արշակ արքայ, կ'ըսէ, «ի խնդիր լինէր քաջ ազգին Մամիկոնէից, որ էին սնուցիչը և մանկակալը թագաւորին»։ Բայց պատմաբան չէ այս, կամ զէթ բացարձակ մարդով առնելու չենք. վասն զի Փաւստոս կը հաստատէ՝ թէ ընդ հակառակն Վարզազատ արքային «դայեակ սնուցիչ» եղած էր Բատ Սահառունը<sup>1</sup>։ Հետեւարար դայեակի ընտրութիւնն արքունեաց կողմանէ՝ ըստ կամս և համակրութեան խընդիր էր. գուցէ երբեմն կախուած նաեւ տոհմիկ կաթնուտի գոյութենէն՝ խնդրուած տան մէջ. թէ և չենք կարող պնդել՝ թէ հայ արքայորդոց ստնտուր իշխանուհիք էին միշտ, մանաւանդ երբ կը նկատենք Արտաշեսի օրինակը<sup>2</sup>։

Արքայորդիք սան կը դառնային իշխանաց, բայց ոչ և դայեակ, որ ընկալանապէս ծառայական գործ մ'էր, և անյարմար արքայազանց աստիճանին։ Բացառութիւն կը կազմէին հայրապետական կամ Լուսաւորչեան տան պայպզատները, որոց առանձին աչքով մը կը նայէր արքունիքը, և յատուկ խնամք մ'ունէր անոնց վրայ։ Վրթանէս կաթողիկոսի երկու նորածին զաւակաց՝ Գրիգորիսի և Քուսկան համար կը զրէ Փաւստոս՝ թէ «սնան զառաքիաւ թագաւորին Հայոց»։ Եւ յատուկացն «ըզ-Յուսիկ սնուցանէր Տիրան որդի թագաւորին Խորովու»։ և երբ երկուտասանամեայ եղաւ, իւր դստեր հետ ամուսնացուց զայն<sup>3</sup>։

Նախարարաց մէջ ալ կ'երեւին, թէ եւ ոչ յաճախ, փոխադարձ դայեակութեան օրինակներ։ Տաճատ ոչտունի և Շաւասպարծրունի՝ տակաւին «սողայք ստոնդեայք»,

և Տիրանայ կոտորածէն ազատած ու յանձնուած սոսկական դայեակաց, վերստին բերուցան, կ'ըսէ Փաւստոս, թագաւորին առջեւ. որ երբ հրամայեց փողոտել զանոնք, իւր որդւոյն վերոյիշեալ սնուցիչներն Արտաւազը ու Վասակ յափշտակեցին անմեղ մանուկները, փախան իրենց աշխարհը, և հոն «սնուցանէին զայն մանկունսն», զորս սպա փեսայացուցին իրենց դստերաց<sup>4</sup>։

Վարդանանց սպասամրութեան շրջանին՝ երբ սպարապետը պահ մը հեռացաւ Հայաստանէն, նենգաւորն Վասակ, կ'ըսէ Փարպեցին, Մամիկոնեանց, կամարականաց և միւս տանուտեարց որդիքը ժողովելով «յիւրաքանչիւր դայեակաց», տալաւ փակեց Սինեաց բերդերուն մէջ<sup>5</sup>։

Կը տեսնենք վկայութենէն, նախ՝ որ օտար սնուցման սովորոյթը շատ ընդարձակ է այդ շրջանին։ Երկրորդ՝ կը կատարուի նոյն ինքն դայեակաց տներուն մէջ, որ երբեմն զաւանդներով հեռի կը գտնուէին մանկանց հայրենի տէնէն։ Այսպէս Մամիկոնեան Հմայեկայ չորրորդ որդին Վարդ՝ Վարդանանց պատերազմի շփոթութեանց պահուն «էր մնացեալ սղայ ի դայեակա իւր ի Տայ», երբեմն սեպհակախոսութիւն Մամիկոնեանց, ուր կանխաւ տարուած էր Տարծուն, իւր մայրենի բնիկ զաւառէն, կը զրէ դարձեալ մի և նոյն պատմիչը<sup>6</sup>։

Եւ երրորդ՝ այդ դայեակներն ազնուական չեն. սպա թէ ոչ՝ մանուկներն անոնց մարդաց մէջ պիտի գտնուէին, ուսկից դիւրաւ չպիտի կարենար Վասակ հաւարել զանոնք։ Երկուսն ազնուական չեն սնուցիչներն երեք կամարական հարազատաց, որոնք ճակատամարտի մը մէջ կը գտնուէին Մամիկոնեան վահանայ հետ, «ինքեանց երկուց կամ երեք դայեակօք» ըստ նոյն պատմիչին<sup>7</sup>. և որոնք եթէ տոհմիկ մարդիկ լինէին, յանուանէ ալ պիտի յիշուէին։ Անոնց մին՝ Երեսեհի զա-

1. Փաւս. 104. — 2. Սոփ. 2, 16. — 3. Փաւս. 285. — 4. Աստ' 177. — 5. Փաւս. 10, 11. — 6.

Նոյն՝ 46-7. — 7. Փրպ. 195. — 8. Նոյն՝ 335. — 9. Նոյն՝ 463.

յեակն՝ յայտնապէս «ի գեղջէն Շիրմաց» էր<sup>1</sup>, այս ինքն գիւղացի մը, բայց անշուշտ բարեկեցիկ ու զարգացած փոքր ի շատէ։

Օտարէ սնուցումը սակայն կը փոխուի երբեմն ինչ ինչ հանգամանաց մէջ։ Յիշեալ Հմայեկայ կին և Վահանայ մայրը Չուիկ՝ այլի մնալով Վարդանանց պատեւրագմի երեսնէն, և երկիրը վտանգուած, նոյն բայցանքը մարզպանը և անոր երկու եղբայրները կը տանի իւր ջեռայրին՝ Վրաց Աշուշայ բոքշխին տունը, Ղազար փարպեցեոյն հետ միասին՝ որ ազնուական էր ծննդեամբ և իրենց տոհմին հետ կապ մ'ունէր. և հոն, կը գրէ պատմիչդ առ Վահան, «սնուցանէ մայրն ձեր օրհնեալ և Անուշվոսա՛մ (ըսյր Չուկայ) ըստ իրեանց հոգեմտութեանն և զմեզ ընդ ձեզ՝ որպէս գձեզ»։ Երկու ջոյրերը միանգամայն կը նուիրուին անոնց անդեան գործին, ցուցնելով՝ հարկէն աւելի՝ զայն անձամբ կատարելու իրենց յօժարութիւնը։

2. — Ուշադրութեան արժանի է Եղիշէի հետագայ այլաբանական իրապաշտ նկարագիրը, ուր աշխարհս կը համեմատուի մանկան հետ. և ուսկից մեք տարրեր դաս պիտի հանենք քան հեղինակին նկատածը։ «Չի մի՛, կ'ըսէ, հանապազ ի իսանձարուրըս և յորբանս կայցէ աշխարհս, կաթնա՛ծուծը և ջամբակերք, թաթաւեալ և թաղեալ զարշելի աղտովք. յորմէ ձանձրացեալ մարք և ստնտուք, և զերեսս ի բաց դարձուցին զայեակը և սնուցիչը»։

Բարդ է վկայութիւնս՝ Նախ՝ կրկին աստիճան ունի հոս սնունդը։ Առաջնոյն մէջ մանուկը դեռ կտրեւածած կամ կարկերկ, ստեղիայ՝ կամ ստեղիոց՝, կը պահուի պատած ի իսանտորոս, ինչպէս կը կոչուէր երկար երէզ մը, որ դառնալով կը պրկէր ամբողջ մարմինն՝ ըստ ընդհանուր սովորութեան՝։ Եւ կը դրուի որդանի,

որորանի՞ կամ որորոցի՞<sup>10</sup> մէջ, որ նման էր մարի, և ներքուստ բոլորչի՞՝ ճօճելու համար<sup>11</sup>, որոյ զաղափարը կայ այս բայանուանց մէջ իսկ, որոնք կը նշանակեն որորելու գործի։ Մանկան հետ կը զրադի մայրը՝ եթէ սոսկականի զաւակ է, ինչպէս կանխաւ ալ ըսինք, և ստեղծու<sup>12</sup> եթէ ազնուագոյի է։ Իրենք կը մաքրեն, կը պատեն ու կը սնուցանեն զայն, և իրենք են որ կը ձանձրանան անոր աղտէն։

Մինգեան երկրորդ աստիճանը կը սկսի այն ժամանակ՝ երբ պէտք էր մանուկը հասուցանել ի ստեղի<sup>13</sup> կամ մկնկն ի ստեղի<sup>14</sup> կամ աճւատու ի կարանկ<sup>15</sup>, այսինքն զաղբեցնել դիեցումը։ Եւ հոն կը դառնայ նա ջամբակեր, վասն զի այնուհետև ձեռքով կը ջամբուի անոր կերակրիկը յատուկ սնուցիլի կողմանէ, եթէ ազատի զաւակ է։

Ազնուական տղային ամբողջ սնուցման հոգը ստանձնած էր դայեակը, սեռը ճշդ-դելու հարկին կոչուած նաև դայեակ այր և դայեակ կիև<sup>16</sup>, և երբեմն ալ մանկակալ հասարակ անուամբ, որ ինքնին կը հայթայթէր անոր ստնտուն, և ապա սնուցիչը, և ինք՝ կը հսկէր միայն անոնց վրայ։ Այս զանազանութիւնը շատ որոշ է Եղիշէի ըզով, Բայց դայեակը լայնաբար կը կողուի յաճախ նաև սնուցիչէ՛նչպէս «դայեակ և սնուցիչ» կամ «դայեակ սնուցիչ<sup>17</sup>»։ կամ՝ գժրիգոր «սնոց յոյեակեք» իւր<sup>18</sup>. և կամ «դայեակ մտեալ՝ սնուցիլ լինիցի<sup>19</sup>»։

3. — Ո՛րքան կը տեւի սնուցման շըրջանը։ Արքայորդուցը բուսական երկար էր, սրովհետև կը կատարուէր արքունեաց մօտ, և դայեակներն անոնց դաստիարակութեան ալ կը հսկէին ապա։ Փաստոս մեզ կը զգացնէ այս պարագայն, երբ շարունակելով Արտաւազդայ և Վասակայ փախստեան պատմութիւնը, կ'ըսէ. «Թո-

1. Փրօք. 454. — 2. Նոյն՝ 572. — 3. Եղիշ, 199. — 4. Երբ. Ե, 13. — 5. Փաւս. 47. Խոր. Գ, 59, ևն. — 6. Թիւրք. ԺԱ, 12. Մթթ. ԻԱ, 16. — 7. Ասոր. աբրահամ. Hüb. 517. — 8. Dar. Fascia, 979-80. — 9. Մանդ. 75. — 10. Եփթ. Առթ. Է 244. — 11.

Dar. Cunaie, — 12. Եւ Խոր. Թ, 14, 14, 4. — 13. Խնեդ. ԻԱ, 8. Ա Թագ. Ա, 22, 23. Եւ. ԻԸ, 9. Ու. Թիթ. Ա, 572. Պատ. Ար. 16. — 14. Ու. Ա, 8. — 15. Եւ. ԻԸ, 9. — 16. Ասոր. 174 Եւ. ԽԹ. 23. — 17. Ասոր. 174. — 18. Արթ. 42. — 19. Եղի. 64.

զին զսանն իւրեանց զԱրշակ, և զնացին ի բաց ի բանակէն արքունի. և չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց, և անդ նստան ամս բազումս ընտանեօց իւրեանց, և թողին զայլ զստն իւրեանց՝: Այսինքն «բանակին»՝ որ է արքունեաց մօտ՝ «այլ տուն»՝ մ'ունէին, ուր կը բնակէին իրենց արքայորդի սանին հետ՝ մինչև անոր յարունս հասնիլը. և երկու Մամիկոնեանք Տիրանայ խժոժութեան պատճառաւ ստիպուեցան ընդհատել իրենց պաշտօնն ու հեռանալ:

Նմանապէս Յուսիկ արքունեաց մէջ, և Տանատ ու Շաւապ՝ Մամիկոնեանց քով երկար մնացին, որովհետև որդգրի պէս էին, և իհասայցան անոնց, ինչպէս տեսանք: Ընդ հակասակն իշխանորդաց դայկութիւնը կարճ կը տևէ, հաւանօրէն մինչև ի պատանեկութիւն. որովհետև անոնք յետ անդիսան պիտի յանձնուէին առանձին դաստիարակաց, մարզուելու համար հանդիսական ուսմանց մէջ՝:

4. — Վերև տեսանք դայկութեան ստեղծած ներքին զօրը, որ ամենէն սիրտըն էր յետ ազգակնաց, և զդայկնեւրը կը կապէր սանուց հետ՝ ասոնց ամբողջ կենաց մէջ: Եղիշէ պատմելով Յագկերտի առ մեր իշխանս ըրած կոչը, կ'ըսէ թէ ինչպէս մեր աւագանին «լոյժ փութային վասն եղբարց և որդեաց և սիրելի դայկկոստանդ բնակացն, որ չարաչար կային ի մեծի նեղութեանն», որպէս զի երթան ազատեն զանոնք՝: Նոյնը կը կրկնէ՝ ազատ թարգմանութեամբ մը՝ Գ. Մակարայեցոց հայ թարգմանիչը. «վասն դայկկոստանդ միաւռնոց սիրոյն»<sup>4</sup>. այս ինքն այն սիրոյն՝ որ պատուն էր անդակցութեան զոյցացած տոհմակցութեան դայկկոստան հետ:

Վահանայ ապստամբութեան շրջանին կռուի մէջ ընկան Մահակ ապստամբաց, րատունի և Վասակ Մամիկոնեան սեպուհը:

Յետոյ սուտ համբաւ մ'ելաւ՝ թէ ողջ են. որոյ ի լուր՝ անոնց կանայքը կը ստիպէին «զդայեակս նոցա և զծառայս»՝ երթալ փնտռելու և բերելու. այսքան անբաժան էին դայկները սանուց տներէն, և պատրաստ միշտ օգնելու և օժանդակելու անոնց:

Միանգամայն շատ մեծ էր դայիկաց ազդեցութիւնն ու դիրքը սաներու վրայ, և երբեմն ազետից ալ պատճառ: Տիրանայ անկանոն վարչութեան օրով Մամիկոնեանք վշտացած՝ հեռացեր էին ազգին զործերէն: Արշակ երբ յաշորդեց հօրը, ելաւ կ'ըսէ Փաւստոս, անձամբ գտնուիք. «մանաւանդ զի իւր դայեակս և սնուցիչը էին»: Անոցմէ երէցը՝ զՎարդան՝ տոհմին տանուտէր կարգեց. և միջինը՝ որ էր Վասակ՝ «զիւր դայեակն», որ յատկապէս զբաղած էր իւր սննդեան զործով, անուանեց սպարապետ Հայոց բանակին. և երբորդը՝ նոյնպէս զինուորական ծառայութեան մէջ դրաւ՝:

Վարդան հանելի եղաւ Շապուոյ, և անոր ու Արշակն մէջ պատգամաւոր կարգուեցաւ: Սակայն Վասակ «նախանձ բերէր» եղբոր յաղոսութեանց վրայ. ամբաստանեց զայն Հայոց արքային առջև իբրև մատնիչ, դարձուց անոր զուխը, և ինքն իսկ զնաց սպանեց հարազատն անոր ամբողջին մէջ՝ մինչդեռ կը լուսացուէր՝: Եւ երբ վերջին անգամ Արշակ կ'երթար առ Շապուոյ, ուր պիտի գտնէր իւր կորուստը, միասին առաւ «զդայեակն իւր» Վասակ, որ իրեն պիտի ընկերէր մինչև Անյուշ բերդը, ոչ եւս իբրև սպարապետ կամ մարդ, այլ խոտալից տիկ մը տխուր, ուրուականի մը պէս կանգնած իւր զմը՝:

Ուրիշ օրինակ մը: Բատ Սահառունին աչք տնկած էր Հայոց սպարապետութեան, զոր քաջին Մուշեղի յաղթանակները ցանկալի ընծայած էին իրեն: Բայց ինչպէս

1. Փաս. 47. — 2. Աստ. մասն Բ, գլ. 9: 2. և 3. Փաս. 66. — 7. Նոյն. 126-8. — 8. Նոյն. 164. — 8. Եղբ. 33. — 4. Գ Մակ. Ե, 18. բն. «սիրայն. 9. Նոյն. 168-9. զստիարակութեանն սէր». — 5. Փրպ. 434. — 6.

շորթի վայն՝ Գիմեց իւր դայեկութեան ազդեցութեանը: Իւր սանը՝ Վարազդատ արքայն՝ դիւրախար երիտասարդ մ'էր: Մամիկոնեան դիւցազին վրայ ամէն մուր քսեց «առ իւրում սանուն», և յաջողեցաւ խարել զայն: Թագաւորը մեծ խնճոյց մը պատրաստեց իշխանաց, ուր ըստ սովորութեան արքեան բոլորը, Մուշեղն ալ միասին: Անոր թմրութեան մէջ տասներկու հոգի պրկեցին անոր բազուկները, և նոյն ինքն Սահառունին, «դայեակն արքային Վարազդատայ», խրեց նրանն անոր փողը, գլուխը կտրեց՝, և առաւ ըսպարապետութիւնը: Այսպէս կը զեղծանէին եզրեմն դայեկները:

Ընդ հակառակն Տրդատայ «դայեկորդին» Արտաւազդ Մանդակունի՝ երախտաւոր կը հանդիսանայ անոր՝ հայրենի աթոռը ձեռք բերելու մէջ. և որոյ համար թագաւորն անոր կը շնորհէ սպարապետութեան պատիւը՝: Եւ Մամիկոնեան Վահանայ բանակին մէջ՝ կամարական եղբարց հետ անբաժան զինակից տեսանց անոնց դայեկները՝ և մէկ դայեկորդին՝: Հոն էին միւս նախարարաց դայեկներն ալ, որոնք միասին կը կուտին, և միասին կը քաշուին թաղտեաց ամրոցները՝ հանգչելու համար՝:

Ոչ միայն դայեկութիւնը, այլ ստնտուութիւնն ալ իւր բաժինն ունէր սաներու կենաց մէջ: Ըստ խորենացոյն՝ Արտաշէսի սարնտուին զաւակը Գիսակ՝ պատերազմի մը մէջ թագաւորին քով իսկ կը կուտի իբրև աւելի մտերիմ անոր, և կը փրկէ զայն՝ զոհելով իւր անձը: Արտաշէս ի նշան երախտագիտութեան՝ անոր ներսէս որդին ազնուականութեամբ կը պատուէ, ուսկից կը սերին Գիմարսեանը՝:

Ե. — Մենք հոս գործ ունինք Արշակունեաց շրջանին հետ, ուր ոչ միայն ազնուականաց որդիք, այլ և դատերը ի-

րենց սեռակից դայեկաց կը յանձնուէին, որոնք զուցէ միանգամայն ստնտու ալ էին երբեմն: Եղիշէ նկարագրելով պատերազմի երեսէն այրիացած կամ ամուսինները գերի տարուած տիկնանց տառապեալ վիճակը՝ կ'ըսէ. «Ձլիշեցան նոցա՝ թէ զուցէ որ ամենեկին ի բնականանուող դայեկաց»՝: Այն դայեկները, որ անոնց ստառութեան ժամանակ անբաժան էին իրենցմէ և միասին կը կերակրուէին, հիմայ այլ եւս չեն տեսնուիր: Եւ բնականապէս ազնուականներ չեն աղոթք, ապա թէ ոչ՝ ազնուականացը բախտակից պիտի լինէին, այլ շինականք՝ իրենց եղբարց դայեկաց պէս:

Յուզիչ է դէպքը Ռշտունեաց Համազասպունի տիկնանը, ծնունդ Մամիկոնեան զարմին, որ ուրացող Մերուժանայ և Վահանայ հրամանաւ փակուեցաւ Վանայ միջնաբերդին մէջ. և չուզելով հրաժարիլ իւր հայրենի կրօնքէն, մերկ ու զլիխվայր կախուեցաւ բերդին բարձր աշտարակէն, ու մնաց հոն՝ մինչև որ մարմինն սկսաւ քայքայուիլ ու թօթափիլ: Այն ժամանակ «կին մի՛ դայեկին նորին» զնաց կեցաւ աշտարակին ներքև՝ ուսկից կախած էին «զսանն իւր» սիրական, արտօսարից աչքերը վեր սևեռելով. և իւր ծոցին մէջ հաւաքելով անոր ոսկրները՝ որ հետզհետէ կը թափէին, « առեալ զնաց յիւրսն », կ'ըսէ Փաւստոս: Սա և սոսկական «կին մի» է, և ազոր շնորհիւ կը համարձակի մօտենալ բերդին ու կատարիլ այդ գործովոյ ու զթութեան գործը:

Ընդ հակառակն՝ արքայազն օրիորդաց վրայ երբեմն կը տեսնենք իշխանի մը հոգաբարձու ձեռքը: Տրդատ երբ եկաւ ի Հայաստան, տեսաւ՝ որ իւր հոր թոսրովու սպանման ժամանակ ամատուտի Օտայ իշխանը պահած ու «սնուցեալ» էր իւր ընդրը թոսրովիդուխտ, որոյ համար խորենացին զայն կը կոչէ «սան նորա»: Տրդատ ի նշան երախտագիտութեան՝ զՕտայ կարգեց Հայոց հազարապետ՝:

1. Փաւ. 235-7. — 2. Նոյն՝ 238. — 3. Խոր. Բ. 443. — 4. Աստ. 174. — 5. Փրգ. 454-5. — 6. Եղիշէ 156. — 7. Խոր. Բ. 174. — 8. Եղիշէ 156. — 9. Փաւ. 178-9. — 10. Խոր. Բ. 443.

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

